Ութերորդ հաղորդում

Կյանքում թագավորելը

Գրվածքների ընթերցում. Հռմ 5:10, 17, 21, 12:5-7, 16:1-16, 20

I. Աստծու լիակատար փրկությունն այն բանի համար է, որ մենք թագավորենք կյանքում շնորհքի և արդարության շնորհի առատության շնորհիվ՝ Հռմ 5:17, 21.

Ա. Կյանքում թագավորելը Աստծու օրգանական փրկության լիակատար փորձառությունն է՝ խխ. 10, 17, 21:

Բ. Արդարության շնորհն Աստծու իրավական փրկագնման համար է նախատեսված. շնորհքը նախատեսված է այն բանի համար, որ մենք փորձառաբար ապրենք Աստծու օրգանական փրկությունը՝ 1:17, 5:10.

1. Արդարության շնորհը Աստծու՝ մեր հանդեպ գործնականորեն կիրառված իրավական փրկագնումն է՝ 3:24, 26:
2. Շնորհքն Աստված Ինքն է՝ որպես մեր համաբավարար մատակարարումը մեր օրգանական փրկության համար՝ Ա Կրթ 15:10, Բ Կրթ 12:9:

Գ. Քրիստոսին ճգտելու մեջ բարձրագույն ձեռքբերումը Քրիստոսի հետ Նրա աստվածային կյանքում Նրա առատ շնորհքի միջոցով թագավորելն է՝ Փլպ 3:13-14, Հռմ 5:17, 21.

1. Կյանքում թագավորելը Սատանային, աշխարհին, մեղքին, մսեղիին, մեզ ու մեր բոլոր արտաքին հանգամանքներին հաղթելը, հնազանդեցնելն ու ենթարկելն է՝ 8:2, 35-37:
2. Բոլոր հավատացյալներին, որոնք ստացել են շնորհքի և արդարության շնորհի առատությունը, անհրաժեշտ է կիրարկել զսպումն ու սահմանափակումն աստվածային կյանքում՝ հմմտ Մտթ 8:9:

II. Մենք պետք է մտնենք կյանքում թագավորելու փորձառության մեջ՝ Հռմ 5:17, 21.

Ա. Մենք վերածնվել ենք աստվածային, հոգևոր, արքայական և թագավորական կյանքով. այս կյանքը մեզ գահն է բարձրացնում, որպեսզի թագավորենք ամեն բանի վրա որպես թագավորներ՝ Հվի 1:12-13, 3:3, 5, Հյտ 5:10:

Բ. Փորձառության տեսանկյունից՝ կյանքում թագավորել նշանակում է աստվածային կյանքի կառավարման տակ լինել՝ Մտթ 8:9.

1. Քրիստոսն այն բանի նմուշն է, թե ինչպես կյանքում թագավորել՝ Հոր աստվածային կյանքի կառավարման տակ լինելով՝ հմմտ խխ. 5-13:
2. Պողոսը օրինակն է մեկի, ով իր կյանքում ու սպասավորության մեջ աստվածային կյանքի կառավարման տակ էր՝ Բ Կրթ 2:12-14:
3. Երբ թագավորում ենք կյանքում՝ աստվածային կյանքի կառավարման տակ լինելով, ազատագրվում ենք խավարի իշխանությունից՝ Կղս 1:13ա:

4. Երբ աստվածային կյանքի կառավարման տակ ենք գտնվում, Աստծու սիրո Որդու թագավորության մեջ ենք ապրում, որտեղ կառավարվում և սահմանափակվում ենք սիրո քաղցրության մեջ՝ խ. 13բ:

Գ. Կյանքում թագավորելն ամեն տեսակ անհնազանդություն ենթարկելն է՝ Հռմ 5:17-18, 21.

1. Թագավորող հոգին պետք է ուժեղ ու կենդանի լինի, գործուն և ոչ թե անգործուն, դրական և ոչ թե բացասական, ջանասեր և ոչ թե անփույթ:
2. Այսպիսի հոգի ունեցողը ոչ միայն իրեն հատկացված դիրքն է պահում և Աստծու իշխանությանը ենթարկվում, այլև ուժեղ հավատք ունի և հետևողականորեն կիրառում է Աստծու իշխանությունը համբարձման դիրքում՝ Մտթ 28:18, Եփս 2:6:

Դ. Կյանքում թագավորելը Տիրոջը թույլ տալն է, որ մեր սրտերն ուղղորդի՝ Առկ 21:1, Բ Թսղ 3:5:

Ե. Քանի որ մենք թագավորում ենք կյանքում, ինչպես Աստված է դա անում, դառնում ենք Աստված կյանքով, բնությամբ, արտահայտությամբ և գործառույթով, բայց ոչ Աստվածությամբ՝ Հռմ 5:17, 21, Կղս 3:4, Բ Պտ 1:4:

III. Հռոմեացիներին ուղղված թղթի 5-րդ գլխում նշված կյանքում թագավորելը Հռոմեացիներին ուղղված թղթի 6–16-րդ գլուխներում ասված բոլոր բաների բանալին է.

Ա. Մենք պետք է 6–16-րդ գլուխներում ասված բոլոր բաներն այս լույսի ներքո տեսնենք:

Բ. Կյանքում թագավորելը սահմանված է 6–16-րդ գլուխներում. այնտեղ մեկնաբանված բոլոր բաները ոչ թե մեր տքնելու արդյունքն են, այլ շնորհքի առատությունը մեր ստանալու՝ 5:21:

Գ. Եթե թագավորում ենք կյանքում, ապա այն բոլոր բաներում ենք, որոնք ներկայացված են 6–16-րդ գլուխներում:

IV. Երբ կյանքում թագավորում ենք՝ աստվածային կյանքի կառավարման տակ ապրելով, արդյունքը Մարմնի իրական ու գործնական կյանքն է լինում՝ եկեղեցական կյանքում արտահայտված՝ 5:17, 21, 12:5-8.

Ա. Հռոմեացիներին ուղղված թղթի 12–13-րդ գլուխներում նկարագրված Մարմնի կյանքի ապրելակերպի յուրաքանչյուր տեսանկյան համար մեզնից պահանջվում է, որ մենք լինենք աստվածային կյանքի կառավարման ներքո՝ առ Տերն ապրելով՝ հմմտ Բ Կրթ 5:14-15.

1. Մենք պետք է մեր մարմինները որպես կենդանի զոհ տրամադրենք՝ Հռմ 12:1բ:
2. Մենք չպետք է ընդունենք այս դարաշրջանի տեսքը, այլ պետք է փոխակերպվենք մտքի նորոգումով՝ խ. 2:
3. Մենք պետք է մեր մասին ավելին չմտածենք, քան հարկ է մտածել , այլ պետք է այնպես մտածենք, որ զգաստամիտ լինենք, ինչպես Աստված յուրաքանչյուրին հավատքի չափ հատկացրեց՝ խ. 3:

4. Մենք պետք է հաշվի առնենք, որ Քրիստոսի Մարմնում շատ անդամներ ունենք, և ոչ բոլոր անդամներն ունեն միևնույն գործառույթը՝ խխ. 4-5:

Բ. Մենք պետք է Մարմնի կյանքի համար բարձրագույն առաքինությունների կյանքով ապրենք՝ կյանքում թագավորելով.

1. Մենք պետք է առանց կեղծավորության սիրենք և միմյանց ջերմորեն սիրենք եղբայրական սիրով՝ խխ. 9ա, 10ա:
2. Ինչ վերաբերում է եռանդին՝ մենք չպետք է ծույլ լինենք, այլ պետք է հոգով վառվող լինենք՝ Տիրոջը ծառայելով՝ խ. 11:
3. Մենք պետք է նեղությանը համբերենք՝ խ. 12բ:
4. Մենք պետք է ուրախացողների հետ ուրախանանք և լացողների հետ լաց լինենք՝ խ. 15:
5. Եթե հնարավոր է, որքան մեզնից է կախված, պետք է բոլոր մարդկանց հետ խաղաղ ապրենք՝ խ. 18:

V. Մենք պետք է կյանքում թագավորենք՝ ընդօրինակելով Պողոս առաքյալին այն բանում, որ տեղական եկեղեցիները բերենք Քրիստոսի Մարմնի հաղորդակցության մեջ՝ 16:1-16.

Ա. Քրիստոսի տիեզերական Մարմինը կազմող բոլոր եկեղեցիների միջավայրում կազմակերպություն չկա, սակայն կա Քրիստոսի Մարմնի հաղորդակցությունը՝ Փլպ 1:5:

Բ. Եկեղեցիների միջավայրում եղող հաղորդակցությունը Քրիստոսի Մարմնի հաղորդակցությունն է՝ Ա Կրթ 10:16.

1. Տիրոջ վերականգնումը հիմնված է այն ճշմարտության վրա, որ Քրիստոսը միայն մեկ Մարմին ունի, որն արտահայտվում է բազում տեղանքներում որպես տեղական եկեղեցիներ՝ Եփս 1:22-23, 4:4, Հյտ 1:11:
2. Քանի որ մեկ Հոգի կա, կա միայն մեկ Մարմին, և կա Մարմնում կյանքի միայն մեկ շրջանառություն. այս շրջանառությունը Քրիստոսի Մարմնի հաղորդակցությունն է՝ Եփս 4:4, Ա Հվի 1:3, 7:
3. Քրիստոսի Մարմնի հաղորդակցությունը Հոգու շրջանառությունն է. երբ Հոգին շրջանառում է Քրիստոսի Մարմնի ներսում, շրջանառում են աստվածայնությունը, մարդկայնությունը, Քրիստոսի անձը, Քրիստոսի մահը և Քրիստոսի հարությունը:
4. Աստվածային հաղորդակցությունը Քրիստոսի Մարմնում եղող ապրելակերպի իրականությունն է՝ Ա Կրթ 1:9, 12:12-13, 27:

Գ. Հենց Մարմնում եկեղեցիների հաղորդակցության միջոցով է խաղաղության Աստված Սատանային ջախջախելու մեր ոտքերի տակ՝ Հռմ 16:20:

VI. Հռոմեացիներին ուղղված թղթի 16-րդ գլուխը մեզ Պողոս առաքյալի գերազանց նմուշն է ցույց տալիս, որը բոլոր սրբերին բերում էր Քրիստոսի ողջ Մարմնի միախառնման կյանքի մեջ. հենց այդպիսի կյանքում մենք կարող ենք ճշմարտապես թագավորել կյանքում՝ 5:17.

Ա. Պողոսը մեկ առ մեկ ողջունեց սրբերին՝ նշելով առնվազն քսանյոթ անուն. դա ցույց է տալիս, որ նա բավականին շատ բան գիտեր նրանց մասին, հասկանում և հոգ էր տանում նրանց համար՝ 16:1-16:

Բ. Պողոսի երաշխավորություններն ու ողջույնները արտահայտում են ինչպես փոխադարձ հոգատարությունը սրբերի միջև, այնպես էլ փոխադարձ հաղորդակցությունը եկեղեցիների միջև՝ հմմտ Կող 4:15-16:

© 2023 Living Stream Ministry